

COVID-19 և աշխատանքի առողջություն և անվտանգություն. Փոքր բիզնես

Ռիսկերի գնահատում և կառավարում

COVID-19-ը փոխել է մեր ապրելակերպն ու աշխատանքը: Բայց փոքր բիզնեսի աշխարհը շարունակում է գործել:

COVID-19-ի աշխատանքի և անվտանգության ռիսկերի գնահատումը կարևոր քայլ է փոքր բիզնեսների համար, որպեսզի բացահայտվեն և կառավարվեն ձեզ, ձեր աշխատակազմին և հաճախորդներին սպառնացող վտանգները:

Երբ ռիսկերի գնահատում եք իրականացնում, հարցրեք ինքներդ ձեզ.

- Որո՞նք են վտանգները
- Ի՞նչ վնաս կարող է այն պատճառել որևէ մեկին և որքանո՞վ է այն հավանական
- Ո՞րն է ռիսկի մակարդակը
- Ի՞նչ կարող եմ անել կառավարելու ռիսկերը
- Ինչպե՞ս կարող եմ ռիսկերը վերանայվել և վերահսկվել՝ ապահովելու համար, որ վերահսկման միջոցառումները լինեն արդունավետ, և ստուգել նոր վտանգները:

Ռիսկերի կառավարումը շարունակական է: Անպայման գնահատեք ցանկացած նոր կամ փոփոխված ռիսկեր, որոնք առաջանում են COVID-19-ի հետևանքով, ինչպիսիք են ռիսկերը կապված հաճախորդների բռնի վարքագծի, աշխատանքի բարձր պահանջարկի կամ մեկուսացման մեջ աշխատելու հետ:

Դուք պետք է գրուցեք ձեր աշխատողների հետ: Միասին դուք կարող եք բացահայտել ռիսկերը և որոշել, թե ինչպես դրանք կառավարել:

Եկեք բոլորս օգնենք, որպեսզի փոքր բիզնեսի աշխարհը գործի: Լրացուցիչ տեղեկությունների համար, այցելեք safeworkaustralia.gov.au կայքը:

Ֆիզիկական հեռավորություն

COVID-19-ի ազդեցության վտանգը մեծանում է, երբ աշխատում եք ուրիշների հետ սերտ շփման մեջ: Հնարավորության դեպքում պահպանեք ֆիզիկական հեռավորություն:

Հաշվի առեք.

- Վերափոխել ձեր աշխատանքի դասավորությունը:

- Անցկացնել ոչ դեմ առ դեմ հանդիպումներ:
- Կրճատել մարդկանց թիվը ընդհանուր տարածքներում:
- Կառավարել հերթերը և հաճախորդների թիվը:

Եվ հնարավորության դեպքում հանդիպումների միջև ժամանակ թողեք՝ սահմանափակելու ֆիզիկական շփումները և ապահովելու, որպեսզի աշխատողները ունենան իրենց գործիքները կամ սարքավորումները:

Տվյալ արդյունաբերության ոլորտին հատուկ խորհուրդների համար COVID-19-ի վերաբերյալ, այցելեք՝ safeworkaustralia.gov.au.

Ձեր աշխատավայրի մաքրումը

COVID-19-ը տարածվում է կաթիլների միջոցով, որոնք արտադրվում են, երբ վարակված անձը հագում է կամ փռչում:

Մարդիկ կարող են COVID-19-ով վարակվել, երբ դիպչում են մակերեսին, որի վրա մանրէներ կան:

Ապահովեք, որ ձեր աշխատավայրը մաքրվի առնվազն ամեն օր լվացող նյութով և ջրով:

Մակերեսը մաքրելուց հետո, դուք կարող եմ այն ախտահանել:

Առաջնահերթությունը սովեք այն մակերեսների մաքրմանը, որոնց հաճախակի են դիպչում:

Եթե ձեր աշխատավայրում COVID-19 հիվանդության դեպք կա, ձեր աշխատավայրը պետք է մանրակրկիտ մաքրել և ախտահանել՝ նախքան մարդիկ կարող են վերադառնալ:

Տվյալ արդյունաբերության ոլորտին հատուկ խորհուրդների համար COVID-19-ի վերաբերյալ, այցելեք՝ safeworkaustralia.gov.au.

Անվտանգ Աշխատանք Ավստրալիայի կայքը COVID-19-ի վերաբերյալ

Անվտանգ Աշխատանք Ավստրալիան մշակել է նոր ուղեցույց՝ օգնելու փոքր բիզնեսներին հասկանալ իրենց աշխատանքի առողջության և անվտանգության պարտականությունները և կառավարել COVID-19-ից բխող վտանգները:

safeworkaustralia.gov.au-ն ունի տեղեկատվություն այնպիսի թեմաների վերաբերյալ, ինչպիսիք են՝ ինչպես իրականացնել ռիսկերի գնահատում, ֆիզիկական հեռավորություն, հիգիենա, անձնական պաշտպանիչ սարքավորումներ, հոգեկան առողջություն և մաքրում:



Օգտագործեք բովանդակության գտման գործիքը, որպեսզի հեշտությամբ գտնեք տեղեկատվություն, որն առնչվում է ձեր փոքր բիզնեսի և արդյունաբերության ոլորտի հետ, ինչպես նաև գործնական նյութեր, օրինակ՝ աշխատավայրի ստուգացանկեր և պաստառներ:

Ձեր արդյունաբերության ոլորտին առնչվող հատուկ խորհուրդների համար, այցելեք առցանց հիմնա safeworkaustralia.gov.au.